ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 2-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց (տե՛ս էջ 36):

* * *

Հուլիսի 3-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր մայր Տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

* * *

Հուլիսի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող պարսկահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը (տե՛ս էջ 13):

Հուլիսի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Գնացեք այսուհետև աշակերտեցեք զամենայն հեթանոսս» (Մատթ. ԻԸ 19) բնաբանով:

* * *

Հուլիսի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, իր անդրանիկ պատարագը մատուցեց Տ. Սամիկոն սրբ. Քիլեճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Զի եթէ աւետարանեմ, ոչինչ են ինչ պարծանք, քանզի հարկ ի վերայ կա» (Ա Կորնթ. Թ 16—17) բնաբանով:

* * *

Հուլիսի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Խաժակ վրդ. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ» (Հովհ. Գ 16) բնաբանով: